ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ, ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ (1920-1921 թթ.)

ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Մ.

Պատմագիտությունը քաղաքական գիտություն է և իր հիմքում ունի ոչ միայն պատմաճանաչողական, այլև գիտագործնական-կիրառական նշանակություն: Այն կոչված է նաև պատմական անարդարությունների բացահայտմանը, գնահատմանն ու դատապարտմանը:

Հայոց պատմության համատեքստում այդպիսի անարդարության փաստեր են 1920-1921 թթ. կնքված, ավելի ճիշտ՝ բիրտ ուժով Հայաստանին պարտադրված Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, որոնք ծանր հետևանքներ են ունեցել հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Միմյանց շարունակությունը կազմող այդ երեք պայմանագրերի արդյունքով Հայաստանը պարփակվեց շուրջ 30 հազար կմ^2 տարածքում: Խորհրդա-քեմալական գործակցությամբ պատռվեց Սևրի խոստումնալից պայմանագիրը, և Խորհրդային Ռուսաստանի գիտությամբ ու Արևմուտքի տերությունների քար անտարբերության հետևանքով բռնազավթվեցին հայկական տարածքները Թուրքիայի կողմից: Անցած 70 տարիներին խորհրդային համակարգում գտնվող Հայաստանը ի վիճակի չէր բարձրաձայնել այդ մասին: Այսօր նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, իբրև Առաջին և Երկրորդ հանրապետությունների իրավահաջորդ, իրավասու է չճանաչել 85 տարի առաջ ուժով հայ ժողովրդին պարտադրված այդ պայմանագրերը և պահանջատեր լինել իր կորսված հողերին:

Քաղաքական և պատմաիրավական ինչ հիմքեր կան չճանաչելու այդ պայմանագրերի օրինականությունը և վավերականությունը: Նախ, սկըսենք Ալեքսանդրապոլի պայմանագրից: Այն կնքվել է թուրք-հայկական պատերազմում Հայաստանի կրած ծանր պարտության հետևանքով: Ռազմաքաղաքական ի՞նչ գործոններ ու հանգամանքներ նպաստեցին Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքմանը: Անհերքելի ճշմարտություն է, որ Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագրի կնքումը հնարավոր դարձավ հիմնականում խորհրդա-թուրքական ռազմաքաղաքական համագործակցության շնորհիվ, որն ապահովեց Թուրքիայի հաղթանակը Հայաստանի նկատմամբ, և դրա ուժի սպառնալիքով վերջինիս պարտադրվեց նըվաստացուցիչ մի պայմանագիր, որով Հայաստանը, ըստ էության, քաղաքական կախման մեջ էր ընկնում Թուրքիայից: Ավելին, Թուրքիայի նպատակը հայկական պետության ոչնչացումն էր[1]: Այդ մասին է վկայում Թուրքիայի արտգործնախարարի պաշտոնակատար Ահմեդ Մուխթար փաշայի՝ 1920 թ. նոյեմբերի 8-ին Արևելյան ռազմաճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրին ուղղված գաղտնի գրությունը, որտեղ մասնավո-

[1] **Кемаль М.**, *Путь новой Турции, т. 3, М., 1934, с. 314.*

բապես հրահանգվում էր. «Ոչնչացնել հայերի բանակը, բռնախլել զենքը և բաժանել մուսուլմաններին, հայերին զրկել նոր բանակ ստեղծելու իրավունքից, տիրել երկաթուղիներին և անմիջական ուղղակի կապ հաստատել ադրբեջանական թուրքերի հետ»[2]:

Քննենք պայմանագրի ստորագրման հանգամանքները: 1920 թ. նոյեմբերի 30-ի երեկոյան թուրքական պատվիրակությունը վերջնագիր ներկայացրեց Հայաստանին, որն էլ քննության դրվեց հանրապետության ղեկավար շրջանների հրավիրած պատմական նիստում: Դրանից մի քանի ժամ առաջ Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը Հայաստանի վարչապետ Ս. Վրացյանին ներկայացրել էր վերջնագիր՝ Հայաստանի խորհրդայնացման մասին: ՀՀ հետագա ճակատագրի հարցը վճռելու համար նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը ՀՅԴ Բյուրոյի, կառավարության, խորհրդարանական խմբակցության և հեղինակավոր մարդկանց մասնակցությամբ տեղի ունեցած պատմական նիստում որոշվեց ընդունել Լեգրանի վերջնագիրը Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ[3]: Սակայն միաժամանակ դրվել էին մի քանի պայման՝ Հայաստա-նի անկախության ճանաչման, քաղաքացիական կռիվներ թույլ չտալու, կառավարության մեջ դաշնակցականներ ընդգրկելու, ինչպես նաև *«տաճիկների հետ հաշտություն կնքելու»*վերաբերյալ[4]: Վերջին կետից կարելի է ենթադրել, որ իշխանությունից հեռացող դաշնակցական կառավարությունը նախատեսում էր, որ թուրքերի հետ հաշտությունը պետք է կնքեր խորհրդային կառավարությունը: Սակայն դեպքերի բերումով ստացվեց այնպես, որ պայմանագիրը ստորագրեց հին կառավարության պատվիրակությունը այն ժամանակ, երբ այդ կառավարությունն արդեն հրաժարական էր տվել, և Երևանի համաձայնագրով իշխանությունը հանձնվել էր Հայհեղկոմին՝ ի դեմս զինվորական դիկտատոր Դրոյի և կոմիսար Սիլինի:

Մինչև օրս սպառիչ պատասխան չի տրվել այն հարցին, թե Ալ. Խատիսյանն ինչո՞ւ ստորագրեց պայմանագիրը, և ի՞նչ հիմքեր կային դրանից հրաժարվելու: Ամենագլխավոր փաստարկն այն է, որ դա կատարվել է մի քանի օրով, Խորհրդային Հայաստանի փաստական իշխանության տեր Դրոյի գիտությամբ ու համաձայնությամբ[5]: Երկրորդը թուրքերի սպառնալիքն էր՝ չստորագրելու դեպքում շարունակել ռազմական գործողությունները մինչև Երևան, և Կարաբեքիրն անգամ սպառնում էր Ալեքսանդրապոլի ամրոցում հաշվեհարդար տեսնել հայ պատվիրակների հետ[6]: Թուրքիան ամեն կերպ ջանում էր պատերազմում պարտված Հայաստանի հին կառավարության հետ շուտափույթ հաշտություն կնքել,

---

[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 3, գ. 31, թ. 6, Հայաստանի Հանրապետություն, 16.III.1991:

[3] **Հակոբյան Ա.,** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թթ., Ե., 2005, էջ 326-328:

[4] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 381:

[5] **Ղազախեցյան Վլ.,** Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, էջ 12:

[6] Վերջին լուր, Կ.Պոլիս, 22.II.1921:

որպեսզի արդեն խորհրդայնացող Հայաստանի նոր իշխանություններին կանգնեցներ կատարված փաստի առաջ:

Հայտնի է, որ Ք. Կարաբեքիրը քաջատեղյակ էր Հայաստանի քաղաքական զարգացումներին: Տվյալներ կան այն մասին, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումից առաջ Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը Դիլիջանից հեռագրել է Կարաբեքիրին՝ տեղեկացնելով Հայաստանի խորհրդայնացման մասին: Կարաբեքիրն էլ պատասխան հեռագրով շնորհավորել է Հայաստանի խորհրդայնացումը[7]: Սակայն դա չի խանգարել Կարաբեքիրին, որպեսզի նա Խատիսյանին հարկադրի ստորագրելու այդ անիրավահավասար պայմանագիրը՝ քաջ գիտակցելով, որ վերջինս այլևս պայմանագիր ստորագրելու լիազորություն չունի:

Մյուս կողմից, դժվար է համաձայնվել պատմագիտական գրականության մեջ տարածում գտած այն տեսակետին, թե, իբր, Դաշնակցությունն էր ձգտում Թուրքիայի հետ շուտափույթ հաշտության պայմանագիր կընքել, որպեսզի փրկի կամ ինչ-որ կերպ երկարաձգի իր իշխանությունը: Ի՞նչ իշխանություն փրկելու մասին խոսք կարող էր լինել, երբ դրանից մի քանի ժամ առաջ ՀՅԴ-ն իշխանությունը կամավոր հանձնել էր բոլշևիկներին[8]: Պատմաբան Ե. Սարգսյանը կարծում է, որ դաշնակցականները ստորագրեցին Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ ի սկզբանե հույսը դնելով այն բանի վրա, որ այն իրավական ուժ չի ունենա, քանի որ իրենց կառավարությունն արդեն հրաժարական էր տվել և իշխանությունը հանձնել բոլշևիկներին[9]: Հնարավոր է, որ Խատիսյանն այնքան էլ մեծ կարևորություն չի տվել պայմանագրի ստորագրմանը՝ մտածելով, որ Հայաստանն արդեն խորհրդայնացել է, բոլշևիկներն ու քեմալականները լեզու կգտնեն իրար հետ, և Հայաստանի համար կկնքվի ավելի նպաստավոր պայմանագիր: Խատիսյանին այդ վստահությունը հավանաբար ներշնչել էր պայմանագրի ստորագրման նախօրյակին՝ դեկտեմբերի 2-ի երեկոյան, Խատիսյան-Դրո հայտնի հեռախոսազրույցի ժամանակ վերջինիս արտահայտած հետևյալ միտքը. «Ես (Դրոն - Հ. Ա.) հավատացած եմ և հույս ունեմ, որ Խորհրդային Հայաստանը կգտնի ընդհանուր լեզու Թուրքիայի հետ, մանավանդ, որ մենք համոզվել ենք ճիշտ այնպես, ինչպես և Թուրքիան, որ հեղափոխական երկրների միակ բարեկամը հեղափոխական Ռուսիան է»[10]: Դժվար է ասել, թե Ալ. Խատիսյանի գլխավորած պատվիրակությունը ստորագրման ժամանակ ինչ է մտածել, սակայն խնդրի իրավաքաղաքական վերլուծության տեսակետից ակներև է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը իշխանափոխության այս փուլում իսկապես իրավական ուժ կարող էր ունենալ այն դեպքում, եթե իշխանության անցած Խորհրդային Հայաստանի կառավարությունը պաշտոնա-

---

[7] **Փիրումյան Ռ.,** Հայաստանը Հ.Յ.Դ. - բոլշևիկ հարաբերությունների ոլորտում 1917-1921, Ե., 1997, էջ 295:

[8] **Հակոբյան Ա.,** 1920 թ. Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրի գինը (Երկիր, 15.XII.2000):

[9] **Саркисян Е.,** *За кулисами. Как рождался Московский договор 1921 г. (Литературная Армения, Е., 1991, N 1, с. 79).*

[10] **Զոհրաբյան Է. Ա.,** Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 1979, էջ 115:

կան հայտարարություն աներ, թե ինքը ճանաչում է նախորդ կառավարության կնքած պայմագրերը, համաձայնագրերն ու պարտավորությունները, մի բան, որ տեղի չի ունեցել: Ինչ վերաբերում է հայկական պատվիրակության կողմից պայմանագիրը չստորագրելու հիմքերին, ապա որպես հիմնավոր փաստարկ, Ալ. Խատիսյանը կարող էր համարձակ պաշտոնական հայտարարություն անել այն մասին, որ ինքը չի կարող կամ իրավունք չունի ստորագրել պայմանագիրը, քանի որ այն կառավարությունը, որ ինքն է ներկայացնում, այլևս գոյություն չունի: Իսկ այն առարկությունը, թե նման դեպքում կմեծանար պատերազմը վերսկսելու Կարաբեքիրի սպառնալիքը, ապա կարծում ենք, որ Թուրքիան չէր համարձակվի պատերազմել Խորհրդային Հայաստանի դեմ, որն, ըստ էության, կնշանակեր պատերազմել Խորհրդային Ռուսաստանի դեմ, մանավանդ որ Թուրքիան արդեն գրավել էր «Ազգային ուխտով» իրեն «հասանելիք» հայկական տարածքները: Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելու փաստարկներից մեկն էլ այն կարող է համարվել, որ հիմք ընդունելով դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական Երևանի համաձայնագրի 7-րդ կետն այն մասին, որ «Ռուսաստանի խորհրդային կառավարությունն անհապաղ կձեռնարկի բոլոր միջոցները՝ զինված ուժեր կենտրոնացնելու, որը անհրաժեշտ կլինի պաշտպանելու ՀՍԽՀ անկախությունը»[11], Ալ. Խատիսյանը կարող էր հրաժարվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելուց՝ամբողջ պատասխանատվությունը դնելով նորահռչակ խորհրդային կառավարության վրա: Սակայն Ս. Վրացյանը այս առնչությամբ կարծում էր, որ եթե Խատիսյանը հրաժարվեր ստորագրելուց, «ապա Արաքսի ափին կանգնած թուրքերը առաջ կըշարժվեին և մինչև ռուս զորքերը հասնեին Էջմիածին ու Երևան, հնարավոր էր, որ էլ հայ չմնար»[12]: Նմանօրինակ դառը փորձ արդեն ուներ հայ ժողովուրդը, երբ 1915 թ. ռուսական զորքերի օգնությունն արևմտահայությանը անհասկանալի պատճառներով ուշացավ:

Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը միջազգային պայմանագրային իրավական նորմերին համապատասխանության տեսակետից դիտարկելիս դժվար չէ տեսնել, որ այն ի սկզբանե չի ունեցել միջազգային ու միջպետական իրավական որևէ ուժ՝ երկու հիմնական պատճառներով. մեկ, որ պայմանագիրը ստորագրող Ալ. Խատիսյանին լիազորություն տվող Ս. Վրացյանի կառավարությունը մինչ այդ արդեն հրաժարական էր տվել և, երկրորդ, ինչպես նշված է բուն պայմանագրի վերջին՝ 18 հոդվածում, այն վավերացվում է մեկ ամսվա ընթացքում[13], որը չի արվել: Պայմանագիրը չի վավերացրել նաև Թուրքիայի Ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ): Նշանակում է՝ այդ պայմանագիրը իր ստորագրման իսկ պա-հից որևէ իրավական ու կիրառական ուժ չի ունեցել: Ավելին, կարելի է ենթադրել, որ այդ ամենը լավ կռահում էր դիվանագիտության մեջ հրմուտ, չափավոր ու իրատես նախկին վարչապետ և արտգործնախարար Ալ. Խատիսյանը: Նա միգուցե մտածում էր, որ պայմանագրի ձևական

---

[11] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 384:

[12] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 503-504:

[13] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 17:

ստորագրումը մաններ էր ժամանակ շահելու և ժողովրդին հնարավոր ֆիզիկական բնաջնջումից փրկելու համար:

Հենց միայն այն փաստը, Ալեքսանդրապոլի պայմանագիրն իր ստորագրման իսկ պահից իրավական ուժ չի ունեցել և չի վավերացվել կողմերի օրենսդիր մարմինների կողմից, ինքնին ապացուցում է այդ պայմանագրի անվավեր լինելու մասին: Եվ դա բավական էր, որ Հայհեղկոմը պաշտոնապես չճանաչեր այդ պայմանագիրը: Սակայն, ամենայն հավանականությամբ, նա համարձակություն չի ունեցել ինքնուրույն կերպով նման հայտարարություն անել: Դրա համար նա նախ պետք է ստանար Մոսկվայի համաձայնությունը, իսկ վերջինիս համար խորհրդա-թուրքական ռազմավարական շահերի տեսակետից դա անթույլատրելի էր: Իսկ եթե Հայհեղկոմը ինքնագլուխ նման քայլի դիմեր ու Ալեքսանդրապոլի պայմանագիրը չեղյալ համարելու մասին հայտարարություն աներ, ապա դա կլիներ կուսակցական կարգապահության կոպիտ խախտում՝ պատժի անխուսափելի հետևանքներով: Բայց և այնպես, Խորհրդային Հայաստանի կառավարությունը 1920 թ. դեկտեմբերին և 1921 թ. հունվարին Թուրքիայի կառավարությանն ուղղված նոտա-հուշագրերում մեղմ տոնով քանիցս վիճարկել է Ալեքսանդրապոլի պայմանագրի օրինականությունը՝ «որպես ուժի միջոցով պարտադրված ու ժողովուրդների ինքնորոշումը ոտնահարող պայմանագիր»[14], և առաջարկել անմիջապես բանակցություններ սկսել ու կնքել նոր բովանդակությամբ արդարացի պայմանագիր: Պատասխան նոտաներում ԹԱՄԺ կառավարությունը փորձում էր ամեն կերպ հիմնավորել Ալեքսանդրապոլի պայմանագրի օրինականությունը և արդարացիությունը[15]:

Սակայն Ալեքսանդրապոլի պայմանագրի միակ պատմաքաղաքական հիմքն այն էր, որ Հայաստանը պարտվել էր Թուրքիային, և հաղթողի իրավունքով, ուժի սպառնալիքով նրան պարտադրվել էր նման ծանր պայմանագիր: Մնացած բոլոր հատկանիշներով կան բավարար (անվիճելի) հիմքեր ի սկզբանե այն իրավական ուժ չունեցող և անվավեր ճանաչելու: Ալեքսանդրապոլի պայմանագիրն իրավական չճանաչելու կռվաններից մեկն էլ հետևյալն է. հայ-թուրքական հաշտության բանակցություններից շաբաթներ առաջ՝ 1920 թ. նոյեմբերի 2-ին, Բյուրո- կառավարությունը, կանխազգալով Հայաստանի մոտալուտ պարտությունը և թուրքերի կողմից Հայաստանին ուժի միջոցով պայմանագիր պարտադրելը, նամակ է ուղարկում ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանին, որ «իրենք շրջապատված են և հարկադրված կլինեն ընդունել իրենց թշնամիների պայմանները»[16]: Ուստի Հայաստանի կառավարությունը հրահանգում էր Եվրոպայի իր ներկայացուցչին, որպեսզի նրա միջոցով եվրոպական պետությունները չճանաչեն ուժով պարտադրվելիք այդ պայմանագիրը, և մերժվի նրա օրինական ու պարտադիր լինելը:

---

[14] *Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, сост. Ю. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 376.*

[15] Նույն տեղում, էջ 366:

[16] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. 1828-1923 թթ., Ե., 1972, էջ 701:

Նշենք, որ Լոնդոնի 1921 թ. փետրվար-մարտյան խորհրդաժողովի ժամանակ Ա. Ահարոնյանը, պատասխանելով Անգլիայի արտգործնախարար լորդ Քերզոնի այն պնդմանը, թե Ալեքսանդրապոլում հաշտություն է կնքվել Մ. Քեմալի և Հայաստանի միջև՝ վկայակոչեց այն հրահանգը, որը ստացել էր իր կառավարությունից Կարսի անկումից անմիջապես հետո, որ «պայմանագիրը պարտադրվել է ուժով և կտրականապես մերժվում է հայերի կողմից»[17]: Այդ հիման վրա Լոնդոնի խորհրդաժողովը չեղյալ է համարում Ալեքսանդրապոլի պայմանագիրը[18]: Եթե խնդիրը քննենք այն ժամանակվա միջազգային իրավահարաբերությունների տեսանկյունից, ապա Ալեքսանդրապոլի պայմանագիրը դարձյալ համարվում է անվավեր: Օրինակ, հայտնի է, որ նորաստեղծ Ազգերի լիգայի 1919 թ. ընդունած կանոնադրության 20-րդ հոդվածն արգելում էր ուժ կամ ուժի կիրառման սպառնալիքի միջոցով պայմանագրի պարտադրումը[19]: Այդ նույն նորմն է ամրագրված ՄԱԿ-ի կանոնադրությունում և Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայում: Հոդված 52-ում ասված է. «Պայմանագիրը համարվում է առոչինչ, եթե կնքված է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքների խախտմամբ»[20]: Կնշանակի՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը եղել է ուժով պարտադրված և միջազգային պայմանագրային իրավունքի տեսակետից անընդունելի ու անվավեր: Խորհրդային պատմագրության մեջ խնդիրը երբեք այս տեսանկյունից չի դիտարկվել ու քննարկվել: Այդ փաստը միաժամանակ վկայում է, որ հայկական կողմը ժամանակին իրազեկ է պահել միջազգային հանրությանը, բողոքել տերություններին, որ Հայաստանին ուժի միջոցով պարտադրվել է անարդարացի մի պայմանագիր, որը պետք է չեղյալ հայտարարվի: Այսինքն՝ ժամանակակից պայմանագրային իրավունքի համապատասխան՝ նրա վրա չի տարածվում վաղեմության ժամկետի (էստոպելի) սկզբունքը, էլ չենք ասում, որ այն իր ստորագրման իսկ պահից իրավական ուժ չի ունեցել և չի վավերացվել պայմանագիրը կնքող պետությունների կողմից:

Քաղաքական և պատմահրավական առումով մեր կողմից քննության առնվող երեք պայմանագրերից առավել աղաղակողը Մոսկվայի պայմանագիրն է: Միաժամանակ այն իր նշանակությամբ և խաղացած դերով համարվում է գլխավորը: Ինչպես հայտնի է, 1921 թ. փետրվարի 26-ից մինչև մարտի 16-ը (իրականում՝ 18-ը) Մոսկվայում տեղի ունեցավ ռուս-թուրքական խորհրդաժողով: Քանի որ այնտեղ քննարկվելու էին Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող տարածքային-սահմանային հարցեր, Մոսկվա մեկնեց նաև Հայաստանի 12 հոգուց բաղկա-

---

[17] **Ահարոնյան Ա.,** Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Պոսթըն, 1943, էջ 110-112:

[18] **Լազյան Գ.,** Հայաստան և Հայ դատը, Ե., 1991, էջ 301, **Խատիսյան Ալ.,** Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 390:

[19] **Ասլանյան Ս.,** Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վերլուծության փորձ (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, N 1, էջ 180):

[20] Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, Ե., 2001, էջ 6, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիա, մաս 5, բաժին 2:

ցած պատվիրակությունը՝ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ: Մոսկվայի խորհրդաժողովում Հայաստանի չափավոր պահանջները ներկայացնելու համար հայկական պատվիրակությունը պատրաստել էր մի զեկույց, որում հիմնավորվում էր Հայաստանի Առաջին հանրապետության տարածքը Խորհրդային Հայաստանին միավորելու պատմաաշխարհագրական, էթնիկական, տնտեսական և քաղաքական անհրաժեշտությունը: Այդ զեկույցին կից կար նաև քարտեզ, որում բերվում էին հայ-թուրքական սահմանի չորս հնարավոր տարբերակներ՝ սկսած առավելագույնը Հայաստանի մեջ ներառելով Սուրմալուն և Կարսի մարզի հիմնական մասը (I տարբերակ) և նվազագույնը՝ մինչև Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված սահմանները (IV տարբերակ), այն է՝ Արաքս և Արփաչայ գծով մինչև Մեծ Աղբաբա ու Ղզըլդաշ լեռները, Մեծ Ղըմլի և Տիխնիս գյուղերը[21]:

Սակայն, թուրքերի պնդմամբ, հայկական պատվիրակությանը չընթույլատրվեց մասնակցելու խորհրդաժողովին, թեև ինչպես ասվեց, այնտեղ վճռվելու էին Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներ: Թուրքական պատվիրակությունն առարկեց, թե ինքը լիազորված չէ հայերի հետ բանակցելու: Մնում էր, որ Հայաստանի շահերի պաշտպանությունը իր վրա վերցներ ռուսական պատվիրակությունը: Ցավոք, այդպես չեղավ: Սա, ինքնին, Հայաստանի ինքնիշխան իրավունքի ոտնահարման բացահայտ խախտում էր: Հայկական պատվիրակության ներկայացրած սահմանային տարբերակները անտեսվեցին և քննության չառնվեցին: Ալ. Բեկզադյանը հետագայում մի առիթով նշում է, որ խորհրդաժողովի աշխատանքների մասին մենք մասնավոր կարգով ժամանակ առ ժամանակ տեղեկացվում էինք ՌԽՖՍՀ արտգործժողկոմատի զինվորական փորձագետ Բոբրիշչևի կողմից[22]: Ավելին, բանակցային գործընթացին մասնակցելուց հեռացվեց նաև Ռուսաստանի արտգործժողկոմատի տեղակալ հայազգի Լև Կարախանը: Վերջինիս փոխարինեց Համառուսաստանյան կենտգործկոմի անդամ, ազգությամբ թուրք Ջելալէդդին Կորքմասովը:

Ռուսական պատվիրակությունն ի սկզբանե, իբրև սկզբունք, պաշտոնապես ճանաչեց թուրքական «Ազգային ուխտը», և 1920 թ. օգոստոսի 24-ի խորհրդա-թուրքական նախաստորագրված պայմանագրի նախագիծը դրվեց բանակցությունների հիմքում: Պատմական ճշմարտությունից հեռու է այն միտքը, թե իբր Մ. Քեմալը մերժել է Մոսկվայի ռուս-թուրքական առաջին խորհրդաժողովի 1920 թ. օգոստոսի 24-ի պայմանագրի նախագիծը[23]: Իրականում Մ. Քեմալը ոչ թե մերժել է այդ նախագիծը, այլ ընդհակառակը, այդ նախագծի հիմնադրույթներն են դրված եղել Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ խորհրդաժողովի հիմքում, և վերջինը նույնիսկ առաջին խորհրդաժողովի տրամաբանական շարունակու-թյունն էր, որտեղ ավելի կոնկրետացվեցին ու խորացվեցին կողմերի հարաբերությունները: Բանակցությունների արդյունքով մարտի 16-ին

---

[21] ՀԱԱ, ֆ. 114, ց, 2, գ. 68, թ. 14-15, ֆ. 1022, ց. 3, գ. 347, թ. 19-20:
[22] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 25:
[23] **Գալոյան Գ. Ա.,** Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, էջ 404:

(իրականում՝ 18-ին) ստորագրվեց տարածքային-սահմանային տեսակետից գործնականում Ալեքսանդրապոլի պայմանագրի նմանակ հակահայկական մի պայմանագիր: Ալեքսանդրապոլի պայմանագիրը, անկախ նրա իրավական հիմքից, անշուշտ, ազդեցություն ունեցել է Մոսկվայի, հետևաբար նաև Կարսի պայմանագրերի գործընթացների վրա: Այն ուղղակի ձևով ազդել է նաև 1921 թ. փետրվար-մարտի Լոնդոնի խորհրդաժողովի՝ Հայաստանին և Թուրքիային վերաբերող որոշումների վրա, առաջինի նկատմամբ վերաբերմունքը կոշտացնելով, իսկ երկրորդի՝ մեղմացնելով: Թեև Ալեքսանդրապոլի պայմանագիրը չէր վավերացվել և չուներ իրավական ուժ, սակայն թուրքերը, պատերազմում հաղթելով, Հայաստանին պարտադրել էին «Ազգային ուխտի» սկզբունքներով կողոպտիչ պայմաններ և Մոսկվայի բանակցություններում, թուրք-ռուսական դիվանագիտական նոտաներում իբրև հաղթաթուղթ շարունակ մատնանշում էին Ալեքսանդրապոլի, նաև Բաթումի պայմանագրերը:

Սակայն կարծում ենք, որ ցանկության դեպքում ռուսական պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինը կարող էր հեշտությամբ չեզոքացնել թուրքերի փաստարկը՝ հիմնավորելով, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի կողմից, այսինքն՝ չի ունեցել իրավական հիմք, և որ այն եղել է ուժի սպառնալիքով պարտադրված պայմանագիր, ուստի Հայաստանի համար չունի պարտադիր բնույթ: Բայց ռուսական պատվիրակությունը նման փաստարկ, առարկություն անելու պարտավորություն չվերցրեց իր վրա, որովհետև մինչ խորհրդաժողովի սկսվելը՝ կողմերն արդեն քաղաքական համաձայնության էին եկել այն մասին, որ թուրքական «Ազգային ուխտի» սկզբունքներն անխախտ են, և այստեղ, ըստ էության, վերահաստատվելու էր Ալեքսանդրապոլի պայմանագրի հայ-թուրքական սահմանագիծը:

Եթե խնդիրը դիտարկում ենք միջազգային իրավունքի տեսանկյունից, ապա ակնհայտ է դառնում, որ Մոսկվայի պայամանագիրը կնքվել է միջազգային իրավունքի ու նորմերի կոպիտ խախտումներով: Բանն այն, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի՝ Դրո-Լեգրան համաձայնագրով խաղաղ ճանապարհով խորհրդայնացած Հայաստանը դիտվում էր որպես անկախ պետություն, մանավանդ որ հանդիսանում էր միջազգայնորեն (դե ֆակտո և դե յուրե) ճանաչված ՀՀ իրավահաջորդը: Հավելենք նաև, որ 1921 թ. գարնանը Խորհրդային Ռուսաստանը տակավին ռազմաքաղաքական դաշինք (պայմանագիր) չէր կնքել Հայաստանի հետ, թեև նման պայմանագրերում ամրագրվում էր, որ ճանաչվում էին պայմանավորվող կողմերի ինքնիշխանությունը և անկախությունը: Ի դեպ, 1920 թ. սեպտեմբերի 30-ին ռազմաքաղաքական նման պայմանագիր կնքվել էին ՌԽՖՍՀ-ի և Ադրբեջանի, իսկ 1921 թ. մայիսին՝ Վրաստանի, բայց դեռ ոչ՝ ՌԽՖՍՀ-ի և Հայաստանի միջև: Ուստի, Ռուսաստանը տակավին իրավասու չէր պաշտպանել Հայաստանի շահերը միջազգային խորհրդաժողովներում: Այս առնչությամբ Ե. Սարգսյանը գրում է, որ չնայած Ռուսաստանի օրինակով Հայաստանում էլ էր հաստատվել կոմունիստական վարչակարգ, սակայն 1921 թ. մարտ ամսվա դրությամբ Հայաստանը պայմանագրային ոչ մի պարտավորվածությամբ կապված չի եղել Խորհրդային Ռուսաստանի հետ: Հետևաբար, Ռուսաստանի Դաշնությունը չի ունեցել իրավաբանական որևէ հիմք՝ տնօրինելու Հայաստանի տա-

բածքները և որոշելու նրա պետական սահմանները[24]: Իրողությունը մնում է այն, որ Խորհրդային Հայաստանի՝ որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտի պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել բանակցություններին:

Մյուս կողմից, Հայաստանը *չէր լիազորել* Ռուսաստանին, որ նա խորհրդա-թուրքական բանակցությունների ժամանակ հանդես գար նաև Հայաստանի (հայ ժողովրդի) անունից և կնքեր նրա կենսական շահերին անմիջապես առնչվող պայմանագիր: Պարզապես գոյություն չունի նման փաստաթուղթ: Միջազգային դիվանագիտության պատմության մեջ եզակի են այն դեպքերը, երբ բանակցող երկու պետություններ քննարկում և համատեղ վճիռներ են կայացնում մեկ այլ անկախ՝ երրորդ պետության տարածքային-սահմանային խնդիրների վերաբերյալ՝ առանց վերջինիս գիտության ու մասնակցության: Ընդ որում, միջազգային այդ պայմանագրի որոշումները երրորդ կողմին՝ տվյալ դեպքում Հայաստանին, պարտադրվեցին մեկ այլ՝ Կարսի պայմանագրով, անվերապահ ճանաչելու և կատարելու հրամայականով[25]:

Այս ամենից, նախ, կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանի (էլ չենք ասում՝ Թուրքիայի) համար քաղաքական արժեք չի ունեցել Հայաստանի՝ որպես պետական սուբյեկտի գործոնը: Հերթական անգամ ապացուցվեց, որ բոլշևիկների հռչակած ազգերի ազատ ինքնորոշման պահանջը ընդամենը խաբկանք էր, ճնշված ազգերին հրապուրող կոմունիստական քարոզչություն: Այնպես, ինչպես «Թուրքահայաստանի ինքնորոշման մասին» Վ. Լենինի հռչակած դեկրետին շուտով հաջորդեց Բրեստի ստորացուցիչ պայմանագիրը, կարծես նույն պատմության հեգնանքով Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախությունը ճանաչած Երևանի համաձայնագրին պիտի հաջորդեր Բրեստից վատթարը՝ Մոսկվայի պայմանագիրը, որովհետև Բրեստի պայմանագրում գոնե խոսք չկար Սուրմալուի և Նախիջևանի մասին:

Այսպիսով, միջազգային իրավական տեսակետից Մոսկվայի պայմանագիրը Հայաստանին վերաբերող մասով հակասում է միջազգային պայմանագրային իրավունքի ընդունված հիմնական նորմերին, այն է. անտեսված են Հայաստանի՝ որպես պետականության սուբյեկտի բանակցություններին մասնակցելու, նրա կամքը ազատ արտահայտելու կամ գոնե նրա կարծիքը հարցնելու պայմանները, որովհետև սա մի խորհրդաժողով էր, որտեղ անմիջականորեն շոշափվում էին Հայաստանի կենսական շահերը՝ տարածքային-սահմանային խնդիրը: Խորհրդային Ռուսաստանը և Թուրքիան, ոտնահարելով հայ ժողովրդի օրինական և անվիճելի իրավունքները, խախտելով միջազգային իրավունքի և միջազգային պայմանագրային իրավունքի սկզբունքները, Մոսկվայի պայմանագրի և նրա հոդված 15-ից բխող ու կրկնօրինակը հանդիսացող Կարսի պայմանագրով Հայաստանին են պարտադրել մի տարածք ու սահմանագիծ, որն անընդունելի էր և է հայ ժողովրդի համար:

---

[24] **Саркисян Е.,** նշվ., աշխ., էջ 81:

[25] Տե՛ս Մոսկվայի պայմանագրի հոդված 15-ը (ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 38):

Տարածքների գրավման և յուրացման հարցում միջազգային պայմանագրերի իրավունքում ընդունված է վաղեմության ժամկետի՝ *Էստոպելի* սկզբունքը (ինստիտուտը): Այդ մասին է վկայում միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 45-րդ հոդվածը: Այնտեղ նշվում է, որ վաղեմության ժամկետի պահանջը գործում է, և տվյալ պայմանագիրը վավերական է այն դեպքում, երբ պահանջատեր կողմը նախկինում որոշակիորեն հարմարվել ու լռելյայն համաձայնվել է կատարված փաստին[26]: Իսկ երբ տուժող կողմն ինչ-որ ձևով արտահայտում է իր դժգոհությունը՝ հայտարարությունների, նոտաների, բողոքների և այլնի միջոցով, ապա վաղեմության ժամկետը դադարում է գործելուց: Հակառակ դեպքում կնշանակի, որ տուժող կողմը լռելյայն ընդունել է կատարված տարածքային փոփոխությունը:

Թեև օրենքը հետադարձ ուժ չի ունենում, սակայն պատմաքաղաքական եղելությունների պարզաբանման տեսակետից հետաքրքրական են հետևյալ հանգամանքները: Նախ, Հայաստանի պատվիրակությունը Մոսկվայի պայմանագրի բովանդակությանը տեղեկացել է միայն նրա կնքումից հետո, այսինքն՝ կատարվածից հետո (*պոստֆակտում)*: Պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասն այնքան դաժան ու աղաղակող էր, որ Հայաստանի ղեկավարությունը ստիպված հանդես է եկել հայտարարությամբ՝ իր անհամաձայնությունն արտահայտելով պայմանագրի վերաբերյալ, թեև համոզված լինելով, որ դա գործնական նշանակու- թյուն չի ունենա: Վաղեմության ժամկետի սկզբունքը կոնկրետացնելով Մոսկվայի պայմանագրի պարագայում՝ տեսնում ենք, որ պայմանագրի կնքումից անմիջապես հետո Հայաստանի կառավարությունը բողոք է ներկայացրել Ռուսաստանի կառավարությանը, որ առանց իր մասնակցության է լուծվել Հայաստանի տարածքների հարցը: Մասնավորապես կարելի է հիշատակել Հայաստանի արտգործժողկոմ, պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանի 1921 թ. ապրիլի 15-ի հայտարարությունը՝ ուղղված Ռուսաստանի արտգործժողկոմ և պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինին: Բեկզադյանն իր այս դիմում-բողոքում մեղադրում է ռուսական պատվիրակությանը հայկական մի շարք խոշոր կենսական տարածքներ՝ Կարսը, Արդահանը, Արդվինը և Սուրմալուի գավառը թեթև ձեռքով (անօրինաբար) Թուրքիային հանձնելու մեջ: Բացի այդ, հայկական կողմը բողոք էր հայտնում այն բանի համար, որ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչները հեռացված էին խորհրդաժողովի աշխատանքներից և անգամ տեղեկացված չեն եղել Հայաստանին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկումների նյութերին[27]: Մայիսի 19-ին ՀԿԿ Կենտկոմի պլենումը, լսելով Ա. Բեկզադյանի հաշվետվությունը ռուս-թուրքական բանակցություններում հայկական պատվիրակության աշխատանքների մասին, հավանություն է տվել պատվիրակության քաղա-

[26] **Ասլանյան Ա.,** Վաղեմության ժամկետի կամ էստոպելի կիրառման անթույլատրելիությունը Մոսկվայի և Կարսի պայմանագրերի առնչությամբ (Վասն արդարութեան, 2003, N 47-48, էջ 68):

[27] *Геноцид армян…, с. 494-498.*

քական գծին[28]: Իրավագետ Ս. Ասլանյանը Հայաստանի կառավարության՝ ժամանակին արված բողոքը ծանրակշիռ փաստարկ է համարում Մոսկվայի, հետևապես և Կարսի պայմանագրերի նկատմամբ վաղեմության ժամկետի սկզբունքը չկիրառելու համար[29]: Նա համոզմունք է հայտնում, որ էստոպելի սկզբունքը անթույլատրելի է կիրառել Մոսկվայի պայմանագրի առնչությամբ՝ հետևյալ հիմնավորումներով. ա) կնքվել է ուժի կիրառման հետևանքով, բ) շահագրգիռ կողմին անտեսելով, գ) հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքին հակասելով, դ) պետությունների սուվերենության և անկախության սկզբունքները ոտնահարելով և այլն[30]:

Այսպիսով, պատմական աղաղակող անարդարություն ու խայտառակություն է այն, որ երկու սուվերեն պետություն՝ Ռուսաստանը և Թուրքիան պայմանագիր են կնքել և որոշել մեկ այլ՝ երրորդ սուվերեն պետության՝ Հայաստանի տարածքն ու սահմաններն առանց նրա գիտության և մասնակցության: Դա մի յուրօրինակ դավադիր գործարք էր, որ իր բնույթով նմանվում է Մոսկվայի՝ 1939 թ. խորհրդա-գերմանական Մոլոտով-Ռիբենտրոպ հայտնի պակտին:

Ինչ վերաբերում է Կարսի պայմանագրին, ապա այն Մոսկվայի պայմանագրի գործնական կրկնությունն էր, այս անգամ Թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների միջև: 1921 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին գումարված Կարսի՝ թուրք-անդրկովկասյան խորհրդաժողովի նպատակը Մոսկվայի պայմանագրի, այսինքն՝ Հայաստանի տարածքների անդամահատման օրինականացումն էր արդեն Հայաստանի ներկայացուցչի ստորագրությամբ: Վավերական է այն պայմանագիրը, որը կնքվել է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան: Այդ պահանջներից մեկը պայմանագիր կնքող կողմերի իրավահավասարությունն է: 1921 թ. Խորհրդային Հայաստանը սուվերեն պետություն էր ձևով, բայց ոչ բովանդակությամբ: Նա ուղղակի կախում ուներ Ռուսաստանի կուսակցական և պետական մարմիններից: Հենց նրանց պարտադրանքով էլ Խ. Հայաստանի ներկայացուցիչ Ա. Մռավյանը ստորագրեց Մոսկվայի պայմանագրի՝ ըստ էության, կրկնօրինակը համարվող Կարսի պայմանագիրը: Այն ստորագրվել է դարձյալ միջազգային պայմանագրային իրավունքում անթույլատրելի նորմերից մեկի՝ ուժի կիրառման կամ կիրառելու սպառնալիքի միջոցով: Հայաստանի պատվիրակությունը մինչև խորհրդաժողովի բացումը կուսակցական վերադաս մարմիններից հրահանգ էր ստացել «չնեղացնել թուրք ընկերներին»: Այդ են հաստատում 1921 թ. մայիսի 7-ի Բաքվի խորհրդակցությունը և ՌԿ/բ/Կ ԿԿ Կավբյու-

---

[28] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 4: Ի դեպ, նշենք, որ Մոսկվայի պայմանագրի առնչությամբ բողոք է հայտնել նաև արդեն տապալված Վրաստանի Հանրապետության՝ ԱՄՆ-ում հավատարմագրված դեսպանությունը: 1921 թ. ապրիլի 12-ին հիշյալ դեսպանատունը նոտայով բողոքում է մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով Արդվինը, Արդահանը և Օլթին ռուսական կառավարության կողմից Անգորային տալու վերաբերյալ [տե՛ս ԱՄՆ-ի դեպարտամենտի փաստաթղթերը (1910-1929 թթ.), Միկրոֆիլմերի հավաքածու, N 1, ց. 1, գ. 761-767]: Գաղտնիք չէ, որ Վրաստանը հավակնում էր Կարսի մարզի առանձին շրջաններին՝ Արդահանին և Օլթիին: Դա ակներև դարձավ նաև 1945 թ. Պոտսդամի խորհրդաժողովի ժամանակաշրջանում:

[29] **Ասլանյան Ս.,** նշվ. աշխ., էջ 69:

[30] Նույն տեղում, էջ 69-70:

բոյի սեպտեմբերի 3-ի պլենումի որոշումները՝ «առաջիկա խորհրդաժողովի հիմքում Մոսկվայի պայմանագիրը դնելու և Անգորայի հետ կովկասյան հանրապետությունների համերաշխություն ցուցադրելու մասին»[31]: Ավելի վաղ՝ 1921 թ. ապրիլի 3-ին, ՌԿ/բ/Կ ԿԿ-ի քաղբյուրոն կայացրել էր որոշում, որի համաձայն, Թուրքիայի հետ անդրկովկասյան հանրապետությունների կնքվելիք պայմանագրերը պետք է նախօրոք արժանանային ՌԽՖՍՀ կառավարության հավանությանը[32]: Այսինքն՝ Կարսի պայմանագրի ստորագրման խնդրում ակներև են վերադասի բարոյական ճնշման ու կուսակցական կարգապահության անվերապահ կատարման հրամայականները:

Այսպիսով, հանրագումարի բերելով հայ ժողովրդի պատմական ճակատագրում ծանր հետևանքներ ունեցած և միմյանց շարունակությունը համարվող Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմահիրավական արդյունքներն ու հետևանքները՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները և առաջարկությունները.

Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ որպես միջազգային իրավական փաստաթուղթ, ի սկզբանե և ոչ մի հատկանիշով իրավաբանական որևէ ուժ չի ունեցել և, ըստ էության, չի գործադրվել, որովհետև մինչև ստորագրումը Հայաստանում տեղի էր ունեցել իշխանափոխություն: Սակայն այդ պայմանագիրը քաղաքական, քարոզչական և հոգեբանական առումով, անշուշտ, ազդեցություն ունեցել է Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վրա:

Մոսկվայի և դրան հաջորդած Կարսի պայմանագրերը Հայաստանին վերաբերող մասերով դարձյալ կողոպտիչ, հակահիրավական և անբարոյական են: Դրանք ստորագրվել են ուժի սպառնալիքով, միջազգային իրավունքի կոպիտ խախտմամբ, միջազգային պայմանագրային իրավունքի անտեսմամբ: Ուստի չեն կարող համարվել միջազգային լիարժեք իրավաբանական փաստաթղթեր, հետևաբար, դրանցում նշված տարածքային փոփոխությունները, պետական սահմանագծումները վիճարկելի են և անընդունելի:

Առաջին աշխարհամարտում պարտված և այդ ընթացքում ծանրագույն հանցագործություն՝ Հայոց ցեղասպանություն իրականացրած Թուրքիան, փոխանակ միջազգային հանրության կողմից պատասխանատվության կանչվեր, ընդհակառակը, օգտագործելով մեծ տերությունների միջև եղած հակասությունները և կեղծ հեղափոխություն ու բարեկամություն խաղալով բոլշևիկյան Ռուսաստանի հետ՝ ոչ միայն պատիժ չկրեց ու չվերադարձրեց Սևրի պայմանագրով նախատեսված արևմտահայ նահանգները, այլև 1920 թ. աշնանը սանձազերծած թուրք-հայկական պատերազմում Խորհրդային Ռուսաստանի օժանդակությամբ և Անտանտի երկրների լիակատար անտարբերության պայմաններում ջախջախիչ պարտության մատնեց Հայաստանի Հանրապետությանը, խորտակեց նրա անկախությունը և իրար նմանակ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով լրացուցիչ ստացավ արևելահայ տարածքների մի զգալի

[31] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 17, գ. 21, թ. 72:

[32] *Политбюро ЦК РКП(б)-ВКП(б). Повестки дня заседаний. Каталог, т. I, 1919-1929, М., 2000, с. 93.*

մասը: Քեմալականները գերակատարեցին թուրքական «Ազգային ուխտով» նախատեսված իրենց տարածքային պլանը: Նրանք տիրացան նաև Սուրմալուին ու Նախիջևանին, որոնք թուրքերին չէին պատկանում. Սուրմալուն պահեցին իրենց, իսկ Նախիջևանը նվիրեցին Ադրբեջանին:

Մոսկվայի պայմանագրի քաղաքական հայավնաս հետևանքներից մեկն էլ եղավ այն, որ հեշտացրեց Անտանտի տերությունների գործը՝ Սևրի պայմանագիրը վերանայելու ուղղությամբ: Խորհրդային Ռուսաստանը այն ժամանակվա միակ երկիրն էր, որ Մոսկվայի պայմանագրով փաստորեն բացահայտ հանդես եկավ Սևրի պայմանագրի դեմ և դրանով քաղաքական մեծ աջակցություն ցույց տվեց Թուրքիային: Մեծ հաշվով, Խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, համատեղ գործակցությամբ հակազդելով և չեղյալ համարելով Սևրի դաշնագիրը, Հայաստանը բաժանեցին իրար միջև:

Իրենց հերթին, արևմուտքի տերությունները սեփական շահերի թելադրանքով մոռացության մատնեցին Սևրի պայմանագիրը և «նոր Թուրքիայի» հետ կնքեցին Լոզանի հաշտության պայմանագիրը, որտեղ *Հայաստան* անունն անգամ չէր հիշատակվում: Լոզանի պայմանագիրը եկավ հաստատելու Մոսկվայի և Կարսի պայմանագրերով գծված հայ-թուրքական սահմանագիծը: Ավելին, կարելի է ասել, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը խորտակիչ հարվածներ հասցրեցին Հայ դատին և Միացյալ ու Անկախ Հայաստանի գաղափարին: Կարսի պայմանագրից հետո ի լուր աշխարհի հայտարարվեց, ցավոք, նաև Խորհրդային Հայաստանի ղեկավարների միջոցով, որ Հայկական հարց այլևս գոյություն չունի, և այն «լուծված» է մեկընդմիշտ: 1920 թ. դեկտեմբերի 4-ին «Պրավդայում» տպված՝ Ստալինի հայտնի հոդվածի լպիրշ արտահայտությունը, թե «այսպես կոչված Հայկական «հարցը», որի համար գլուխ էին կոտրում իմպերիալիստական դիվանագիտության հին գայլերը՝ միայն խորհրդային իշխանությունը կարողացավ լուծել»[33]: Հիրավի, սա դառը հեգնանք է հայոց պատմությանը և նրա ճակատագրին: Թող զարմանալի չընթա, որ Ստալինի արտահայտած միտքը քիչ ավելի ուշ բառացիորեն կրկնեց Մ. Քեմալը 1922 թ. մարտի 1-ին ԹԱՄԺ-ում արտասանած ճառում: Նա, բարձր գնահատական տալով Կարսի պայմանագրին, նշում էր. «Այսպես կոչված «Հայկական հարցը», որը ցանկանում էին լուծել ավելի շուտ, կապիտալիստական աշխարհի տնտեսական շահերով՝ գտավ իր ամենաճիշտ լուծումը Կարսի պայմանագրում»[34]: Կարելի է ասել, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը իրար այնքան մոտ էին ու նման, որքան Ստալինի և Քեմալի գնահատականները Հայկական հարցում:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը և ամբողջ հայ ժողովուրդն ունեն քաղաքական և իրավական բավարար հիմքեր ու փաստարկներ՝ պետական մակարդակով միջազգային դատական ատյաններ բարձրացնելու և քննարկելու Մոսկվայի և նրա հետևանքը հանդիսացող Կարսի պայմանագրերի օրինականության հարցը՝ Հայաստանին վերաբերող մասով դրանք անօրինական ու անվավեր ճանաչելու՝ *դենոնսացիայի*

---

[33] *Правда, 4.XII.1920.*

[34] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 162, թ. 20-21:

ենթարկելու և պահանջատեր լինելու իրենց բռնազավթված հողերին: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացների հետ կապված՝ անհրաժեշտ է պետական, գիտական, հասարակական քննարկումների միջոցով նախապատրաստել հայ-թուրքական հարաբերությունները վերջնականորեն կարգավորող լայնածավալ (քաղաքական, տնտեսական, մշակութային, հումանիտար և այլ բնույթի) պայմանագրերի նախագծերի փաթեթ: Մինչ այդ Հայաստանը կարող է պաշտոնապես հայտարարել Թուրքիայի հետ միջպետական պայմանագրային հարաբերությունները չկարգավորված, կողմերի միջև փաստորեն հաշտության պայմանագրի բացակայության մասին, ինչպիսի հարաբերություն 60 տարուց ավելի է, որ գոյություն ունի Ռուսաստանի և Ճապոնիայի միջև: Միգուցե նպատակահարմար կլինի, որ այնպես, ինչպես Ճապոնացիներն ունեն իրենց Հյուսիսային հողերի օր (հայտնի չորս կղզիների կապակցությամբ), այնպես էլ հայերը կարող են «մարտի 16-ը» պաշտոնապես հայտարարել «հայկական հողերի պահանջատիրության օր»:

ИСТОРИКО-ПРАВОВАЯ ОЦЕНКА АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО, МОСКОВСКОГО И КАРССКОГО ДОГОВОРОВ (1920-1921 ГГ.)

АКОПЯН А. М.

Резюме

Подписание Александропольского, Московского и Карсского договоров имело тяжелые последствия для армянского народа.

Многосторонний анализ армяно-турецких переговоров и Александропольского договора (2 декабря 1921 г.) показывает, что этот договор в качестве международного правового документа изначально не имел никакой юридической силы, поскольку до его подписания в Армении произошла смена власти и, кроме того, договор не был ратифицирован со стороны обоих государств.

Среди рассматриваемых договоров вопиюще несправедливым является Московский русско-турецкий договор (16 марта 1921 г.), касающийся жизненно важных для Армении территориальных вопросов. Обсуждение принципиальных для Армении пунктов данного договора состоялось без ведома и участия ее делегации, присутствовали лишь делегации России и Турции. Московский договор есть грубое нарушение международных прав и норм. Хотя и правительство Армении вовремя опротестовало его, но это не имело никакого значения.

Карсский договор (13 октября 1921 г.) был механическим повторением пунктов и статей Московского договора. Таким образом, эти три антиармянских договора являли собой грубое нарушение и игнорирование международных прав и норм. Исходя из сказанного, ныне правительство РА имеет достаточно оснований для того, чтобы на государственном уровне добиться денонсации данных договоров.